# «ԿՈՎԿԱՍՅԱՆ ՎԱԳՐԻ» ՎԵՐԱԴԱՐՁԸ

## ՄԱՍ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՈԴԵԼԻ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

*DOI: 10.52174/2579-2989_2024.3-5*

**Հիմնաբառեր.** *տնտեսական արդիականացում, «թռչող բադերի» վարկած, «տեղից պոկվելու» փուլ, համեմատական առավելություններ, կառուցվածքային բարեփոխումներ*

*2023 թ.-ի բարձր աճի ցուցանիշով վերջին 3 տարիների միջին տնտեսական աճը մոտ է 9%-ի, ինչն աննախադեպ է 2007 թ.-ից սկսած: Ոչ միայն բարձր աճի տեմպով, այլև աճի գործոնների նմանությամբ՝ վերջին տարիների ցուցանիշները ստիպում են հիշել «կովկասյան վագրի» ֆենոմենը, որն այս հոդվածում խորհրդանշում է բարձր տնտեսական աճը՝ թույլ հիմնարարներով: Ահա թե ինչու՝ հոդվածաշարում նպատակ է դրվել ուսումնասիրելու Հայաստանի տնտեսական վերափոխումները և քննարկելու ցանկալի մոդելին հասնելու քաղաքականությունները:*

*Այս հոդվածում քննարկվում են Հայաստանի տնտեսական վերափոխումները՝ սկսած խորհրդային շրջանից՝ առաջ քաշելով այն վարկածը, որ տնտեսությունը բաց է թողել աստիճանական զարգացման որոշակի փուլեր, ինչն էլ դարձել է նրա խոցելիությունների պատճառը: Առաջ են քաշվում զարգացման երեք հնարավոր սցենարներ, որոնցից յուրաքանչյուրի իրագործումը ոչ ստանդարտ է և պահանջում է մանրակրկիտ «տնային աշխատանք»՝ անհրաժեշտ կառուցվածքային բարեփոխումների և ոլորտային քաղաքականությունների ուղղությամբ:*

**Նարեկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Տնտեսագիտության թեկնածու

*2019 թ., ավարտելով ՀՊՏՀ-ն, ընդունվել է ասպիրանտուրա: 2016-2018 թթ. եղել է ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող, ապա փորձագետ:*

*Վերապատրաստումներ է անցել աշխարհի տարբեր երկրների հեղինակավոր կազմակերպություններում:*

*https://orcid.org/0000-0003-4978-6107*

Հակառակ դանդաղման սպասումների, 2023 թ.-ին ՀՀ տնտեսական աճը շարունակեց տպավորիչ լինել՝ շուրջ 8.7 2024 թ.-ի ընթացիկ տվյալները եւս հուշում են, չնայած դանդաղող, սակայն՝ միջինում բարձր տնտեսական ակտիվության մասին (հունվար-սեպտեմբեր ամիսների ՏԱՑ-ը 8.7% մակարդակում է արձանագրվել): Այսպիսով՝ վերջին 3 տարիների՝

2021-2023 թվականների միջին աճը մոտ է երկնիշ աճի նշաձողին, ինչն աննախադեպ է՝ սկսած 2007 թ.-ից, երբ Հայաստանի համար ավարտվեց 2000-ականների երկնիշ տնտեսական աճի փուլը:

Տնտեսագետները վերոնշյալ տարիները հաճախ ասոցացվում են, այսպես կոչված, «կովկասյան վագրի» ֆենոմենի հետ, որը խորհրդանշում է տնտեսական ճեղքում կամ, ինչպես ընդունված է ասել, «տնտեսական հրաշք» գրանցելու մեր հավակնությունները: Ընդ որում, «կովկասյան վագր» բնութագրումը, որքան էլ որ զարմանալի ինչի, ոչ թե քաղաքական պարծենկոտություն էր, այլ Համաշխարհային բանկի մասնագետների գնահատականը՝ որպես մի ամբողջ հետազոտության վերնագիր:

Սակայն, եթե շարժվենք վերնագրերը կարդալուց այն կողմ, նախ՝ կտեսնենք, որ հետազոտությունում (որը, ի դեպ, չի արտացոլում Համաշխարհային բանկի պաշտոնական դիրքորոշումը) «կովկասյան վագր» բնորոշումը ոչ թե Հայաստանի տնտեսության այդ ժամանակվա մոդելի, այլ տնտեսական աճի միջին ցուցանիշների բնորոշումն էր, որը, թվային առումով, մոտ էր «թռիչքի» ժամանակ «ասիական վագրերի»[1] գրանցած ցուցանիշներին: Իսկ իրականում՝ գրեթե ամբողջ հետազոտությունը տնտեսության խոցելիությունների, տնտեսական բարեփոխումների և տնտեսության մոդելի փոփոխության անհրաժեշտության մասին էր[2]: Ընդ որում, ինչպես դեռ առիթ կունենանք արձանագրելու, այդ հիմնախնդիրներից շատերն արդիական են նաև այսօր:

Թերևս, հենց դա է պատճառը, որ եթե «ասիական վագրերի» բարձր աճերը տևեցին առնվազն երեք տասնամյակ, Հայաստանի նման աճը տևեց ընդամենը 5-6 տարի, որից հետո տնտեսությունը մտավ թույլ տնտեսական աճի տասնամյակ՝ այդ ընթացքում զգալիորեն հետ ընկնելով համադրելի (մրցակից) երկրներից: Այսպես՝ 2009-2018 թվականներին Հայաստանի տնտեսության աճի միջին տեմպը կազմել է ընդամենը 2.3%, երբ միջին եկամտային խմբի երկրները միջինում աճել են 5.2%-ով:

Ահա այս դառը փորձն է, որ ստիպում է վերջին տարիների բարձր աճերը զուգահեռել 2000-ականների տնտեսական զարգացումների հետ: Ընդ որում՝ ոչ միայն մեխանիկորեն. բազմաթիվ են նմանությունները նաև աճի կառուցվածքի ու գործոնների առումով: Սա արդեն հուշում է «կովկասյան վագրի» ֆենոմենի վերադարձի մասին, այն իմաստով, որ խորհրդանշում է բարձր տնտեսական աճ՝ տնտեսության բազմաթիվ խոցելիությունների պայմաններում:

Ընդ որում, այսօր իրավիճակն էլ այն չէ, ինչպես 2010-ականներին: Նախ՝ 2010-ականները աշխարհի համար գերցածր տոկոսադրույքի ժամանակաշրջան էին, երբ երկրները կարող էին էժան փոխառություններ ներգրավել: Ակնհայտ է, որ այդ ժամանակաշրջանն արդեն անցյալում է: Բացի այդ, թույլ աճի տասնամյակում Հայաստանն արդեն իսկ «ծախսել» է իր հարկաբյուջետային ու ֆինանսական «տարածքի» մեծ մասը (պետական և մասնավոր պարտք ներգրավելով), և դրա սահմանները փորձարկելը կարող է ծանր հետևանքներով արկածախնդրության վերածվել:

Հետևաբար, նախ՝ կարևոր է լավ հասկանալ, թե որտեղ է գտնվում տնտեսությունը՝ աճի հիմնարար գործոնների առումով: Երկրորդ՝ հարկավոր է թիրախավորել ցանկալի ուղին և բացահայտել այդ ուղով գնալու բանաձևը:

Բնականաբար, չհավակնելով վերլուծական ակնարկի այս ձևաչափում տնտեսության հիմնախնդիրների համապարփակ ախտորոշում ներկայացնել, հոդվածում կանդրադառնանք Հայաստանի տնտեսության վերափոխումների ընդհանուր պատկերին՝ փորձելով վեր հանել ապագայի հնարավոր ուղեգծերը:

### *Տնտեսական վերափոխումների ստանդարտ ճանապարհը*

Հայաստանի տնտեսական զարգացումների վերլուծություններն ընդունված է սկսել 2000-ականներից: Հիմնական պատճառն

[1] Այս եզրույթը, սովորաբար, կիրառվում է բնութագրելու համար ասիական 4 երկրների՝ Հոնկոնգի, Սինգապուրի, Հարավային Կորեայի և Թայվանի տնտեսական թռիչքը՝ 1960-1990-ական թվականներին:

[2] Տես Mitra, S. (2007). The Caucasian tiger: sustaining economic growth in Armenia. World Bank Publications.

այն է, որ տնտեսագիտական վերլուծության համար այդ՝ չափազանց կարճատև շրջանում տնտեսությունը գործել է շուկայական ինստիտուտների ռեժիմում և կարող էր «մակրոտնտեսական վարքագիծ» ցուցաբերել, այսինքն՝ ամբողջական առաջարկի ու պահանջարկի ուժերի ազդեցությամբ պարբերաշրջանային տատանումներ ունենալ իր ներուժի շուրջ:

Բացի այդ, կա ավելի պարզ, տեխնիկական պատճառ. հիմնականում 2000-ականների սկզբից է, որ առկա են քիչ թե շատ համադրելի, միջազգային ստանդարտներին համապատասխանող տվյալներ, որոնք կարելի է կիրառել մակրոտնտեսական վերլուծության հայտնի գործիքակազմերում:

Սակայն, համոզված ենք, որ Հայաստանի տնտեսության վերափոխումներն ընդամենը վերջին երկու տասնամյակների համար քննարկելը կիսատ պատմություն կլինի: Նախ՝ ինչ ենթակառուցվածքների, ինչ մարդկային կապիտալի, հասարակական վարքագծի ինչպիսի՞ կանոնների վրա է «կառուցվել» անկախ Հայաստանի շուկայական տնտեսությունը: Բնականաբար՝ ոչ վակուումում, և դրան նախորդել են բազմաթիվ տնտեսական վերափոխումներ:

Որպեսզի հասկանանք, թե ինչ վերափոխումների մասին է խոսքը, անհրաժեշտ է փոքր շրջայց կատարել դեպի տեսություն:

Առաջինը, որ շատ ուշագրավ է՝ այս վերափոխումները հասկանալու տեսանկյունից, Ուոլտ Ռոստոուի՝ 1950-ականներին հայտնի դարձած վարկածն է տնտեսական արդիականացման մասին: Հիմնվելով Միացյալ Թագավորության, ԱՄՆ-ի և զարգացած այլ երկրների փորձի վրա՝ Ռոստոուն պնդում էր, որ հասարակություններն արդիականացման 5 փուլ պետք է անցնեն: Այդ փուլերն են ավանդական տնտեսությունը (1), «տեղից պոկվելու» հնարավորությունների կուտակումը (2), «տեղից պոկվելը» (3), հասունությունը (4) և բարձր զանգվածային սպառումը (5): Ըստ այդմ՝ արդիականացումը ենթադրում է ցածր արտադրողական, ագրարային տնտեսությունից դեպի բարձր արտադրողական տնտեսություն վերափոխումը, նախ՝ արդյունաբերացման, ապա նոր տեխնոլոգիաներով վերազինման գործընթացների միջոցով՝ ի վերջո, հանգելով սպառողական ապրանքների և ծառայությունների վրա հիմնված մոդելի:

Վերոնշյալ գործընթացը, ընդ որում, ինքնին տեղի չի ունենում, և յուրաքանչյուր փուլից մյուսին անցումը ենթադրում է նախ՝ արտաքին միջամտություն (1>2), ապա ինտենսիվ ներդրումներ ենթակառուցվածքներում (2>3), բարձր ու կայուն ներդրումներ արդյունաբերության մեջ (3>4) և, ի վերջո, միջազգային առևտրում համեմատական առավելությունների ձևավորում (4>5)[3]:

Չնայած իր պարզությանը՝ այս տեսությունը ներկա տնտեսական աշխարհակարգի շատ տարրեր ավելի հստակ է դարձնում, օրինակ՝ զարգացման միջազգային կազմակերպությունների կողմից տրվող արտոնյալ վարկերը՝ ենթակառուցվածքներում ներդրումներ կատարելու համար (արտաքին միջամտություն՝ 1>2, ապա 2>3՝ անցումների համար), «ասիական վագրերի» վերելքը՝ արդյունաբերության մեջ մեծ ներդրումներով (3>4), ԱՄՆ-ի և եվրոպական երկրների վերափոխումը հետարդյունաբերական հասարակությունների՝ առանց համաշխարհային առևտրում էականորեն դիրքերը զիջելու (4>5):

Բայց և այնպես, այստեղ ևս բազմաթիվ ուշագրավ մանրամասներ կան: Օրինակ՝ այն, որ արդյունաբերացումն էլ իր շերտերն ունի: Սա լավ է արտահայտված 1960-ականներին ասիական երկրների արդյունաբերացման գործընթացը քննարկող՝ «թռչող բադերի» վարկածում, ըստ որի՝ արտադրությունների կենտրոններն աստիճանաբար տեղափոխվում են առաջատարներից դեպի մյուս՝ տնտեսական, ֆինանսական, արդյունաբերական նախապայմաններ ունեցող երկրներ: Այսպես, ըստ վարկածի հեղինակի, «թռչող բադերի երամում» առաջատարը Ճապոնիան էր, որին մյուս շարքերում հաջորդում էին այդ ժամանակ դեռ «նորինդուստրիալ» երկրները՝ Կորեան, Սինգապուրը, Թայվանը և Հոնկոնգը, վերջիննե-

[3] Rostow's Stages of Growth Development Model. https://www.thoughtco.com/rostows-stages-of-growth-development-model-1434564

րիս՝ Թաիլանդը, Մալայզիան և Ինդոնեզիան: Վերջին շարքում ավելի թույլ զարգացած երկրներն էին՝ Չինաստան, Վիետնամ, Ֆիլիպիններ և այլն: Այս աստիճանակարգության մեջ յուրաքանչյուր քայլով նախորդը պետք է զբաղեցներ հաջորդի տեղը՝ մինչև ամբողջական զուգամիտումը (կոնվերգենցիան)[4]:

Եթե ամփոփենք, ապա այս երկու հայեցակարգում էլ արդիականացումը որոշակի հաջորդականություն ունեցող գործընթաց է, որը, անցնելով տեխնոլոգիական հագեցման ու արդյունաբերացման գործընթացներով, ի վերջո, հանգեցնում է հետարդյունաբերական տնտեսության ձևավորմանը: Սակայն, հետհայացք գցելով այդ ճանապարհն անցած երկրներին, կարելի է նկատել, որ նույն «երամի» հետին շարքերում գտնվող ոչ բոլոր երկրներն են, որ տեղափոխվել են առաջ, փոխարենը՝ մասնագիտանալով այն կետում, որտեղ հասել են ինչ-որ պահի: Արդյունքում համաշխարհային տնտեսությունն ավելի շատ նմանվել է ոչ թե «շարժվող» աստիճանակարգության, այլ ցանցի, որտեղ առաջընթացը՝ սկզբից մինչև վերջ, ավելի շատ բացառություն, քան օրինաչափություն է:

### *Հայաստանի տնտեսական վերափոխումները*

Անգամ մակերեսային հայացքը թույլ է տալիս պնդել, որ Խորհրդային Հայաստանը կարողացել է անցնել Ռոստոուի մոդելի առաջին երեք փուլերը: Նախ՝ հայտնի է, որ մինչև 20-րդ դարի առաջին կեսը Հայաստանն ագրարային երկիր էր: Ինչպես Ռոստոուի տեսությունում է, արդիականացումը սկսվեց արտաքին ազդակով և արտաքին ներդրումներով՝ ինչը մեծ պլանային տնտեսության դեպքում անգամ ավելի դյուրին է: 1950-ականներին ներդրումների բարձր մակարդակը էներգետիկ համակարգում և արդյունաբերության մեջ պայմաններ ստեղծեց «տեղից պոկվելու» համար, իսկ 1960-1980-ականներին արդեն տնտեսությունը հենց «տեղից պոկվելու» փուլում էր[5]:

Ճիշտ է, խորհրդային շրջանի եկամտի մակարդակի վերաբերյալ գնահատականները ոչ միանշակ են (քանի որ, օրինակ, միջազգային գնողունակության համարժեքով հաշվարկված եկամտի մակարդակը չի երաշխավորում նույնանման ապրանքների և ծառայությունների զամբյուղի գնման հնարավորություն՝ առաջարկի ոչ շուկայական լինելու պատճառով), և տվյալները հուշում են, որ «տեղից պոկվելու» փուլը զուգակցվել է բավական բարձր եկամտի մակարդակի ձևավորման հետ: Այսպես՝ 1970-ականների սկզբին Հայկական ԽՍՀ եկամտի մակարդակը ԱՄՆ-ի եկամտի մակարդակի շուրջ 40%-ն էր և համադրելի այնպիսի երկրների հետ, ինչպիսիք են Չեխիան, Ռուսաստանը, Լեհաստանը: Մինչդեռ, օրինակ, Թուրքիայի եկամտի մակարդակին գերազանցում էր կրկնակի:

Սակայն «հասունության» փուլ, որը կբնութագրվեր միջազգային մակարդակում կայուն համեմատական առավելությունների ձևավորմամբ, այդպես էլ Խորհրդային Հայաստանը չմտավ (ինչպես և, մեծ հաշվով, ԽՍՀՄ-ն ընդհանուր առմամբ): Դրա մասին է վկայում 1980-ականների ստագնացիան, որի հետևանքով 1990 թ.-ին արդեն Հայաստանը զիջում էր իր հետ նախկինում համադրելի երկրների մեծ մասին, իսկ նրա եկամտի մակարդակը ԱՄՆ-ի եկամտի մակարդակի 26%-ն էր: Բացի այդ, միջազգային մակարդակում համեմատական առավելությունների բացակայության մասին ամենախոսուն փաստը ԽՍՀՄ փլուզումից հետո դրա վերականգնման ձախողումն էր (բացառությամբ ռեսուրսային հատվածի):

1991-1993 թվականների տնտեսական անկման հետևանքով եկամտի մակարդակն անկում ապրեց շուրջ 60%-ով, իսկ մինչ 2000 թ.-ը՝ այդ անկման փոքր մասը միայն հնարավոր եղավ վերականգնել: Փոխարենը այն գրեթե ամբողջությամբ վերականգնվեց 2001-2008 թվականնե-

[4] Asian Development Bank. (2020). Asia's Journey to Prosperity: Policy, Market, and Technology Over 50 Years. Asian Development Bank. p. 318.

[5] Այսպես, ըստ ԽՍՀՄ պաշտոնական վիճակագրության, 1940 թ.-ից մինչև 1960 թ.-ը Հայկական ԽՍՀ-ում էլեկտրաէներգիայի արտադրությունն աճել է շուրջ 7, իսկ արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ շուրջ 8 անգամ: 1960-1980-ականներին արդյունաբերությունն աճեց մոտ 6 անգամ՝ հասնելով համախառն արդյունքի 66%-ին: Տես Народное хозяйство СССР за 70 лет (Юбилейный статистический ежегодник), https://istmat.org/node/7687




ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

**Հայաստանում 1 շնչին ընկնող ՀՆԱ-ն, գնող. համ. (PPP)՝ 2011 թ. գներով[6]**




ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

**Հայաստանի ՀՆԱ-ն, որպես տոկոս, որոշ երկրների 1 շնչի ՀՆԱ ցուցանիշի համեմատ**

*Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկներ, Maddison Database, https://www.rug.nl/ggdc/historicaldevelopment/maddison/releases/maddison-project-database-2020?lang=en և IMF WEO October 2023 database*

րին: Եկամտի ևս մեկ զգալի կորուստ գրանցվեց 2009 թ.-ին, որը վերականգնելու համար անհրաժեշտ եղավ ևս 5 տարի: Տեխնիկապես, Հայաստանը 1985 թ.-ին գրանցված 1 շնչի ՀՆԱ իր բարձրակետը վերականգնեց միայն 2017 թ.-ին: Արդյունքում, երբ 1970-80-ականներին եկամտի մակարդակով Հայաստանին համադրելի երկրները, հաջորդ տասնամյակներում համեմատական առավելություններ ձևավորելով, անցնում էին «հասունության» փուլ, Հայաստանը մի ճգնաժամից մյուսին էր անցնում՝ փորձելով վերականգնել նախորդի կորուստները:

Արդեն 2018 թ.-ին Հայաստանում մեկ շնչին ընկնող եկամուտն ԱՄՆ-ի ցուցանիշի 21%-ն էր, իսկ նախկինում համադրելի դիտարկված երկրների եկամտի մակարդակի՝ 40-60%-ը:

Ահա թե ինչու էինք նշում, որ վերափոխումները պետք է դիտարկել միայն ավելի երկար ժամանակահատվածի համար: Այդ տեսակետից, երբ դիտարկում ենք 2000-ականների բարձր տնտեսական աճի տարիները, պարզվում է, որ դրանք ոչ թե ինչ-որ «վագրային ցատկի», այլ ընդամենը կորսված եկամտի մակարդակի վերականգնման տարիներ էին, և անգամ առանց ճգնաժամերի էլ՝ չէին կարող երկար շարունակականություն ունենալ:

Ընդ որում, եկամտի մակարդակի վերականգնումը տեղի չունեցավ նույն կառուցվածքով, այլ այդ նպատակով ձևավորվեց լրիվ ուրիշ տնտեսական կառուցվածք: 1980-ականներին տնտեսության գրեթե 70%-ն արդյունաբերությունն էր: 1990 թ.-ին վերջինիս կշիռը նվազեց մինչև 30%, որից հետո տատանվում է 20%-ի շրջանակում: Փոխարենը՝ ծառայությունների ոլորտը, որը 1980-ականներին 10%-ի շրջանակում էր, դարձավ աճի հիմնական շարժիչը՝ սկսած 2000-ականներից՝ 2023 թ.-ին հասնելով ՀՆԱ 57%-ին: Երբ սա վերածենք գնողունակության համարժեքով ճշգրտված իրական ՀՆԱ-ի, ապա արդյունաբերությունն իրական արտահայտությամբ 1980 թ.-ից մինչև 2023 թ.-ը նվազել է 2.5 անգամ, իսկ ծառայություններն աճել են 8.5 անգամ: Մինչդեռ գյուղատնտեսությունն ու շինարարությունն իրական արտահայտությամբ, քիչ թե շատ, նույնական մակարդակ են վերադարձել:

Եթե դիտարկենք միայն տնտեսության կառուցվածքը (առանց եկամտի մակարդակի), և քննարկումը տանենք արդիականացման տեսությունների համատեքստ, տպավորություն կառաջանա, որ տնտեսությունը հասել է «բարձր զանգվածային

[6] Աղբյուրը՝ Maddison Database, https://www.rug.nl/ggdc/historicaldevelopment/maddison/releases/maddison-project-database-2020?lang=en




ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

**Հայկական ԽՍՀ և ՀՀ համախառն արդյունքի կառուցվածքը, %**




ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

**Հայաստանի ՀՆԱ կառուցվածքը, մլրդ ԱՄՆ դոլար՝ ըստ գնող. համարժեքի, 2011 թ. գների**

*Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկներ, Maddison Database, https://www.rug.nl/ggdc/historicaldevelopment/maddison/releases/maddison-project-database-2020?lang=en և ՀՀ ՎԿ վիճակագրական տարեգրքեր:*

սպառման» փուլին՝ ծառայությունների վրա հիմնված տնտեսությանը: Սակայն, եթե համադրենք բոլոր տվյալները, կտեսնենք, որ տնտեսության ներուժը հետ է գլորվել արդյունաբերացման փուլերից՝ նորից պահանջ առաջացնելով գրեթե սկզբից անցնելու «տեղից պոկվելու» փուլը: Իրականում ձևավորվել է պարադոքսային թվացող մի իրավիճակ, երբ տնտեսության կառուցվածքը սպառման վարքագծի իներցիայով խզվել է տնտեսական ներուժից, ինչի հետևանքով սպառումը ֆինանսավորվում է արտաքին փոխառություններով կամ տրանսֆերտներով: Եվ սա, բնականաբար, «էժան նստել» չի կարող. ստեղծվել են բազմաթիվ խոցելիություններ, որոնց պատճառով Հայաստանի տնտեսությունը չափազանց զգայուն է դարձել արտաքին ցնցումների նկատմամբ:

### *Տնտեսական մոդելի ձևակերպման հրամայականը*

Այս ախտորոշումը ստիպում է մտածել այն ուղիների մասին, որոնք տնտեսության ներուժն առնվազն կբարձրացնեն մինչև «սպառման իներցիայով» պահանջվող մակարդակ, և ապա կերաշխավորի հաշվեկշռված աճ: Այս ճանապարհին, խոշոր առումով, կարող են տեղի ունենալ 3 հնարավոր ռազմավարական ընտրություններ կամ սցենարներ.

1. Արդյունաբերացում՝ «տեղից պոկվելու» փուլի «կանոններով»: Ճիշտ է, սա այն փուլն է, որտեղ Հայաստանը արդեն եղել է 1960-1980-ականներին, սա չի հեշտացնում ճանապարհը: Համաշխարհային տընտեսությունը փոխվել է, և նույն ոլորտներով համեմատական առավելություններ ապահովել հնարավոր չէ: Հետևաբար՝ կարևոր է ճիշտ սահմանել թիրախները, այդ թվում՝ շեշտը դնելով ներկայում ձևավորվող ոլորտների վրա (օրինակ՝ արհեստական բանականություն, իրերի համացանց, կենսատեխնոլոգիաներ և այլն): Աշխարհում հայտնի են արդյունաբերացման տարբեր ռազմավարություններ և մոտեցումներ, որոնք, վստահաբար, կարող են օգնել ճիշտ ռազմավարության ձևակերպմանը:

2. Հետարդյունաբերական տնտեսություն՝ ծառայությունների արտահանման շեշտադրումով: Մինչև 2022 թ.-ը Հայաստանը հաջողությամբ արտահանում էր ՏՏ ծառայություններ, իսկ ռուս-ուկրաինական պատերազմից հետո հնարավորություններ բացվեցին նաև ֆինանսական և լոգիստիկ ծառայությունների համար, որոնք էական դերակատարում ունեցան 2022-2023 թվականների բարձր աճի ցուցանիշների ապահովման մեջ: Ընդ որում, համաշխարհային տնտեսության՝ դեռևս ընթացող հատվածավորումը կարող է նույնիսկ լրացուցիչ հնարավորություններ ստեղ-

ծել: Սակայն, կարևոր է ձևավորել ենթակառուցվածքներ ու կայուն համեմատական առավելություններ, որոնք, գուցե, ժամանակավոր հնարավորությունները կվերածեն տնտեսական մոդելի բաղադրիչների:

3. Երկու սցենարի զուգակցում: Սա նշանակում է ստեղծել անհրաժեշտ նախապայմաններ և ենթակառուցվածքներ ծառայությունների արտահանման համար՝ միաժամանակ, իրականացնելով թիրախային արդյունաբերական քաղաքականություններ: Առաջին հայացքից, սա նշանակում է ռիսկերի բազմազանեցում, սակայն բազմակի թիրախները նաև հակված են փոշիացնելու ռեսուրսները, հետևաբար՝ կարևոր է ճիշտ ընտրել հաշվեկշռման կետերը:

Այս տարբերակներից յուրաքանչյուրի համար պետք է գտնել քաղաքականությունների յուրահատուկ համադրություն (policy mix):

Մի բան հստակ է՝ փուլային զարգացման «դասական» ճանապարհից Հայաստանը, կամա թե ակամա, շեղվել է, ինչը ստիպում է մանևրել արդիականացման ու զարգացման տարբեր փուլերով՝ ստեղծելու զարգացման յուրահատուկ ճանապարհ:

Բայց որքան էլ զարգացման ճանապարհը յուրահատուկ լինի, կան կառուցվածքային բարեփոխումների ուղղություններ, որոնք պետք է ձևավորեն այն ինստիտուտները, ֆիզիկական ենթակառուցվածքները, կարգավորումների դաշտը, որն անհրաժեշտ է զարգացման ցանկացած ճանապարհի համար: Հաջորդ հոդվածում կուսումնասիրենք այդ բարեփոխումների շրջանակը և Հայաստանի հնարավոր առաջնահերթությունները:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Asian Development Bank. (2020). Asia's Journey to Prosperity: Policy, Market, and Technology Over 50 Years. Asian Development Bank.
2. Maddison Database, https://www.rug.nl/ggdc/historicaldevelopment/maddison/releases/maddison-project-database-2020?lang=en
3. Mitra, S. (2007). The Caucasian tiger: sustaining economic growth in Armenia. World Bank Publications.
4. Rostow's Stages of Growth Development Model. https://www.thoughtco.com/rostows-stages-of-growth-development-model-1434564
5. Народное хозяйство СССР за 70 лет (Юбилейный статистический ежегодник), https://istmat.org/node/7687



**НАРЕК КАРАПЕТЯН**

*Преподаватель АГЭУ, кандидат экономических наук*


ПУЛЬС ЭКОНОМИКИ

## ВОЗВРАЩЕНИЕ «КАВКАЗСКОГО ТИГРА» ЧАСТЬ 1. ЭКОНОМИЧЕСКИЕ ПРЕОБРАЗОВАНИЯ И НЕОБХОДИМОСТЬ РАЗРАБОТКИ ЭКОНОМИЧЕСКОЙ МОДЕЛИ АРМЕНИИ

При высоких темпах роста в 2023 году средние темпы экономического роста за последние 3 года составят в среднем 9%, что является беспрецедентным показателем с 2007 года. Не только из-за высоких темпов роста, но и из-за их движущих факторов экономические показатели последних лет напоминают нам о феномене «кавказского тигра», который в этой статье подразумевает высокие темпы роста экономики при более слабых фундаментальных показателях. Вот почему в этой серии статей мы стремимся исследовать экономические трансформации и политику движения к желаемой экономической модели.

В данной статье обсуждается экономическая трансформация Армении со времен советского времени, предлагая гипотезу о том, что экономика пропустила определенные этапы развития, что стало ключевой причиной макроэкономической уязвимости. С этой точки зрения в статье предлагаются три возможных сценария развития, реализация любого из которых нестандартна

и требует детальной домашней работы по разработке структурных реформ и промышленной политики.

**Ключевые слова:** *ээкономическая модернизация, модель «летящих гусей», этап «взлета», сравнительные преимущества, структурные реформы*

**NAREK KARAPETYAN**
*Lecturer at ASUE, PhD in Economics*



## REVIVAL OF THE "CAUCASIAN TIGER" PART 1. TRANSFORMATIONS AND THE NEED TO DEFINE THE ECONOMIC MODEL OF ARMENIA

With high expansion in 2023, the average economic growth rate overthe past 3 years is approximately 9%, which is unprecedented since 2007. This is noteworthy not only because of the high growth rates but also due to the driving factors behind them. The economic figures of the last years remind us of the phenomenon of the "Caucasian tiger", which, in this paper, implies high growth with weaker fundamentals. Thatis why, in this series of paperr we aim to investigate the economic transformations and the policies for navigating towards the desired economic model.

This paper discusses Armenia's economic transformation since the Soviet era, suggesting a hypothesis, that the economy skipped certain stages of development, which became a key reason for its macroeconomic vulnerabilities. From this perspective , the paper proposes three possible scenarios of development, implementation of which is non-standard, and requires detailed planning to design structural reforms and industrial policies.

**Keywords:** *economic modernization, "flying geese" model, stage of "take-off", comparative advantages, structural reforms*